## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԻ ՏԳԵՂ ԵՐԵՒՈՅԹԻ ԱՌԻԹՈՎ

Արձանագրելով մեր կուսակցական կեանքի աչքի ընկնող երեւոյթները, չենք կարող մատնանիշ չը լինել «Արձագանք»-ի այն պամֆլետական յօդուածի վրայ, որ կոմեդիական գրուածքի ձեւով երեւցաւ այդ լրագրի ֆելիետոններից մի քանիսում և որ կրում է, ցաւելով պիտի ասել, մեզ բոլորիս ծանօթ Սուլուկի ստորագիրը։ Մատնանիշ պէտք է լինել թէկուզ այն պատճառով, որ նա առաջինը առիթ տւեց հասարակութեան խօսակցութեան և երկրորդ՝ նրա համար, որ այդ յօդուածը շօշափում է այնպիսի անձնաւորութիւններ, որոնց մենք երբէք չէինք ցանկանայ հանդէս բերուած տեսնել մեր հասարակութեան առջև այդպիսի լուսաւորութեան տակ.... Ինչպէս արդէն նկատեցին ուրիշները շատ ճիշդ կերպով, այս գրուածքը, որ պամֆլետական է—իսկ թէ պամֆլետական է՝ դրան վկայում է այն հանգամանքը, որ հէնց այդպիսի կոչումով նա պտտում է շատ շատերի բերանում—հէնց միայն այն պատճառով, որ նա պամֆլետական է—ամփոփում է արդէն իր մէջ իրեն նսեմացնող, սպանող պատճառները, հետեւաբար և բնաւ չի կարող ունենալ այն ոյժը և այն հետեւանքները, որ աչքի առաջ ունէին նրան հրատարակող պարոնները այդ գրուածը տպագրութեան յանձնելու րոպէին։ Գրականական գրուածները պիտի ունենան որոշ, աւելի ազնւացնող, աւելի կրթողական նշանակութիւն հասարակութեան համար. իսկ պամֆլէտները այդ ոյժը ունենալ չեն կարող, ինչպիսի գողտրիկ և գեղեցիկ ձեւերի տակ էլ և չը յայտնւէին նրանք։ Հէնց դա է պատճառը, որ մենք, ուրիշների հետ միասին, հակառակ ենք դէպի այն կարծիքը, որ այդպիսի գրուածները, ոչ մի ազնւացնող նպատակի չը համնելով, անուղղակի անդրադառնում են իրանց հեղինակների վրայ։ Իսկ եթէ դա այդպէս է, մենք կարծում ենք, բնաւ հարկաւոր չէր տպագրել մի այնպիսի գրուած, որն աւելի ուղղուած է դէպի, կարելի է ասել, դեռ ևս ոչ բոլորովին պաղած մի դիակ։ Հարկաւոր չէր այն պատճառով, որ Ռաֆայէլ Պատկանեանը, յաւիտենականութեան անցած րոպէին, արժանի էր աւելի իր լաւ կողմերից յիշւելու, արժանի էր աւելի իր դրական յատկութիւնների կողմից գծւելու, քան նսեմանալու «րոպէի և գիտակցութիւնը մթնեցնող կրքի տակ յօրինուած գրուածքներում...»։ Հարկաւոր էր այդ լաւագոյն կողմերից վերատակւել հէնց թէկուզ իր գ ո ր ծ ն ա կ ա ն նշանակութեան համար—նրա ընտանիքը պաշտպանելու նկատմամբ։ Մեզ թւում է, թէ «Արձագանք»-ն իր այդ վարմունքով—մենք թողնում ենք խնդրի իրաւաբանական տեսակէտը—այսինքն թէ նա որքան իրաւունք ունէր տպագրել մի յօդուած, որի լոյս ընծայելու մասին դեռ որոշ պատասխան չունէր,—մեզ թւում է, ասում ենք, թէ «Արձագանք»-ն իր այդ վարմունքով աւելի անվայել կերպով

հանդէս բերեց հասարակութեան առաջ իր հակակրելի և նեխած կողմերի մի անկիւնը, որոնց նա մինչև այսօր կամէք աւելի խուլ կերպով էր կրում իր մէջ։ Մի յայտնի ռուս գրող մի սրամիտ նկատողութիւն է արել. «Լաւ, շատ լաւ են անում որոշ մարդիկ — ասում է նա, երբ իրանց նեխած կողմերն հանդէս են բերում հասարակութեան առաջ այնպիսի րոպէներում և պարագաներում, որ նրանց իսկական գինը բոլորի համար անկասկածելի է դառնում։ Լաւ է նրա համար, որ այդպիսով մարդիկ աւելի շուտ կը ճանաչեն «գործողներ» տիտղոսի տակ թաքնուած իրանց կեղծ բարեկամներին....»։

Այո, ցաւալի իրողութիւն է, բայց պէտք է արձանագրել.

ԱՌ. ՂՈՒԼՍԱՆՑ

Թիֆլիս.

ԾԱՆ. ԽՄԲ.-Տպելով այս գրուածքը, մեր դիտաւորութիւնն է եղել արտայայտելու տեղ տալ հասարակաց կարծիքին, որին կցում ենք նաև մեր ձայնը, գտնելով որ Սիւլիւկի «Աստառ» գրուածքի հրատարակութիւնը Արձագանքի մէջ վիրաւորական ակտ էր դէպի հանգուցեալ բանաստեղծի յիշատակը և, դորանից անկախ՝ գրականական խիստ տգեղ մի վարմունք։